ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հունիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

81
(2931)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶՊԵՏԸ՝ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վերջերս Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը հանդիպում է ունեցել մարզի տարբեր ներկայացուցիչների հետ:

Թեժ քննարկումներ են եղել, որոնց ընթացքում Կարեն Սարգսյանը հայտարարել է, որ շուտով սկսվելու է Գեղարքունիքի մարզի սահմանագծման եւ սահմանազատման աշխատանքները:

Հիշեցնենք, որ Գեղարքունիքում ադրբեջանական զինված ուժերը հաստատվել էին դեռ 2021 թվականի մայիսի 12-ից:

Նրանք մեծաքանակ զինվորականներով եւ զինտեխնիկայով հատել էին Հայաստանի Հանրապետության տարածքը Սյունիքի մարզի Սեւ Լճի տեղամասում, ապա նաեւ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա եւ Կութ բնակավայրերի տեղամասում եւ դիրքավորվել:

Կարեն Սարգսյանը վստահեցրել է, որ այն տարածքները, որտեղ ադրբեջանական ուժերն են այսօր օկուպացրել, հետ են գնալու, ազատելու են մեր տարածքները:

Սարգսյանը վստահեցրել է, որ սահմանազատումն անձամբ ինքն է իրականացնելու մարզում, տիրապետելու է բոլոր տվյալներին եւ գործողություններին, հավատացրել է՝ անհանգստանալու ոչինչ չկա: Ըստ մարզպետի՝ Ադրբեջանը հետ է գնալու առանց որեւէ խնդրի:

Բայց, չնայած մարզպետի լավատեսությանը, հարեւան բայց ոչ ամենեւին բարեկամ Ադրբեջանն այլ բան է հոխորտում: Մասնավորապես՝ Ալիեւը 2020 թվականի պատերազմից հետո մի քանի անգամ հայտարարել է, որ իր զորքերը հետ չեն քաշվելու, եւ սրան զուգահեռ Հայաստանից նոր տարածքների զավթման պահանջներ է դնում՝ ՀՀ ողջ տարածքը համարելով Ադրբեջան եւ պահանջելով փոխել ՀՀ Սահմանադրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մարզպետից տեղեկանալ՝ որտեղից ունի վստահություն, որ ամեն ինչ Գեղարքունիքի բնակիչների սրտով է լինելու:

«Ես բնակիչների հետ հանդիպում միշտ ունեցել եմ, բայց այդ թեմայով քննարկում չեմ հիշում», - ստեց Կարեն Սարգսյանը:

Ստացվում է, որ Կարեն Սարգսյանի վստահությունը եւ հավաստիությունը, թե ամեն ինչ լավ է լիելու եւ առանց խնդիրների, մտացածին է, քանի որ Ալիեւն ինքն է ամեն օր քար նետում խաղաղության գործընթացի վրա:



Երեկ ՀՀ իշխանությունները ազդարարեցին հերթական ձախողման մասին: Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ հայտարարվեց, որ միասնական տոմսային համակարգի, այն է՝ տրանսպորտի թանկացման նախագծի ներդրման ժամկետները երկարաձգվում են: Միասնական տոմսային համակարգը պետք է ներդրվեր սեպտեմբերի 1-ից, սակայն երեկ հայտարարվեց՝ համակարգի ներդրումը կհետաձգվի այնքան ժամանակ, մինչեւ նոր ավտոբուսները գան եւ երթուղի մտնեն: Ընդ որում, հստակ ժամկետներ էլ չնշվեցին՝ որքան ժամանակով է այն հետաձգվում, միայն փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը հայտնեց, որ նոր ավտոբուսների ներմուծումը ժամանակացույցով նախատեսված է հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ իշխանությունները սխալ հաշվարկների պատճառով հերթական անգամ ձախողել են, այս անգամ՝ իրենց կողմից մեծ շուքով եւ աղմուկով անոնսված նախագիծը, որը հանրության շրջանում էլ դժգոհությունների մեծ ալիք էր բարձրացրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններով՝ ՔՊ-ում այս ձախողման պատասխանատու համարում են փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանին, ում համակարգման տակ է եղել այս նախագիծը եւ ձախողվել: Բանն այն է, որ Սուրեն Գրիգորյանը, բացի ձեռքը գրպանում քաղաքացիների հետ արագ անհասկանալի զրույց ծավալելու գործառույթից, տրանսպորտի հարցով որեւէ այլ քայլով աչքի չի ընկել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե իրավապահները ինչ հարցեր են տալիս քաղաքացիներին, որոնք հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից կիրառված լուսաձայնային նռնակներից վիրավորում էին ստացել: Մասնավորապես, նրանք քաղաքացիներին հարցնում են, թե ինչ գործ ունեին Բաղրամյան պողոտայում, արդյոք իրենց ստիպել են ու տարել են ակցիայի կամ շահագրգռել: Դատելով իրավիճակից՝ իրավապահները տուժած քաղաքացիներին հարցաքննում են ոչ թե նրանց հետ կատարվածի մեղավորներին՝ ասել է թե՝ ոստիկաններին պատժելու եւ նրանց իրավունքները պաշտպանելու համար, այլ քաղաքացիներին հանրահավաքի հրավիրողներին կամ կազմակերպողներին հայտնաբերելու նպատակներով: Ի դեպ, նռնակների պայթյուններից տուժած շատ քաղաքացիներ էլ դեպքից 6 օր անց դեռ սպասում են դատաբժիշկներին, որոնք ուշացնում են հասարակ եզրակացությունների տրամադրումը: Այս պատկերին զուգահեռ իրավապահները ակտիվ գործընթաց են սկսել եւ «քաղաքական հրահանգի արդյունքում» կալանավորում են «Տավուշը հանուն հայրենիքի շարժման մասնակիցներին»: Ապրիլից մինչեւ օրս տեղի ունեցած ակցիաների հետեւանքով կալանավորված է 29 քաղաքացի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում նոր կալանավորումներ եւս կլինեն:

Երեկ ԱԺ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանը հայտարարեց, որ դուրս է գալիս «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից: Չնայած, որ Սամսոնյանն իր գրառման մեջ պատճառների մասին չէր խոսել, սակայն «Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել այս մասին: Նախ՝ տեղեկացանք, որ Անի Սամսոնյանը դեռ վաղուց է ԼՀԿ-ն լքելու մտադրություն ունեցել, քանի որ տեւական ժամանակ տարբեր հարցերի շուրջ տարաձայնություններ է ունեցել կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանի հետ: Մեր տեղեկություններով՝ այդ տարաձայնությունները դեռ եղել են այն ժամանակ, երբ պատերազմից ու ցավալի կորուստներից հետո Էդմոն Մարուքյանը որոշեց ստանձնել Նիկոլ Փաշինյանի՝ հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը ու տարբեր առիթներով աջակցում էր իշխանություններին: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Սամսոնյանի ու Էդմոն Մարուքյանի միջեւ տարաձայնությունները վերջին ժամանակահատվածում ավելի են խորացել, ինչի արդյունքում Սամսոնյանը որոշել է այլեւս իր ճանապարհը չշարունակել կուսակցության ներսում: Տեղեկացրել է Մարուքյանին ու լքել ԼՀԿ շարքերը: Նշենք, որ Սամսոնյանը կուսակցության առանցքային դեմքերից է, ու ակնհայտ է, որ այս որոշումը խոր արմատներ ունի: Ի դեպ, Անի Սամսոնյանը առաջիններից էր, որ Սրբազան շարժմանը իր աջակցությունն է հայտնել ու, կարծես թե, դա եւս նպաստել է վճռական որոշում կայացնելուն՝ ԼՀԿ-ից հեռանալու համար: Ըստ մեր տեղեկությունների՝ Սամսոնյանը քաղաքականությունը չի թողնելու, իր ակտիվ գործունեությունը կշարունակի, սակայն դեռեւս պարզ չէ, թե ինչ ձեւաչափով: Անի Սամսոնյանը հայտարարել է, որ կուսակցությունը լքելու հետ կապված որեւէ մեկնաբանություն չի անելու. այդպես է որոշել, եւ վերջ: Հիշեցնենք, որ ԼՀԿ-ն լքած առաջին կին ներկայացուցիչ նախկին պատգամավորը Աննա Կոստանյանն էր, որը այժմ Սրբազան շարժման ակտիվ մասնակիցն է, արմատական ընդդիմություն:

ԶՐՈՒՅՑ

«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԱՑ ԵՎ ԱՄՈԹԱԼԻ ՎԻՃԱԿ Է». ԲԱԲԱՅԱՆ

Քաղաքական ներկա իրավիճակի, ժողովրդական շարժման եւ այլ թեմաների առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է էքստրասենս Սոսե Բաբայանի հետ:

-Տիկին Բաբայան, այսօր կիզակետում մի իրավիճակ, երբ ժողովուրդը դրսում պահանջում է Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, ակցիաներ են իրականացվում, սահմանին լարված է, խնդրում ենք պատմել Ձեր կանխատեսումների մասին այս առիթով, արդյո՞ք Նիկոլ Փաշինյանը կտա հրաժարական, եւ եթե կանի դա, ապա ե՞րբ:

-Այդ հարցը կանխատեսումներից դուրս էտապում է, որովհետեւ Հայաստանի Հանրապետությունն այսօր աղետալի վիճակում է գտնվում, դեռ շատ մարդիկ ստիպված լքելու են իրենց տունն ու հայրենի օջախը, քանի որ իրենց տները թշնամուն են անցնելու, եթե վարչապետը զգում է, գիտի դա, եւ ոչ մի բանալի չկա, որով ժողովրդին կարող է հանել այս վիճակից, իսկ Ադրբեջանն էլ դա զգում է, այս խնդիրները թույլ չեն տալիս լավատեսորեն մտածել եւ դուրս գալ այս գերությունից: Ինչպե՞ս է ղեկավարն իրեն թույլ տալիս տասնյակ հազարավոր մարդկանց անվանարկելու, միայն նրա համար, որ իրենց գաղափարակից չեն: Իրենք Արցախի հայաթափման մեղավորներն են, եւ դրա դեմ ոչինչ անել չկարողացան, իսկ այսօր մեղադրում են այն արցախցուն, որը շարժման է միանում:

Այս տառապալի երեւույթը բոլորիս համար է վտանգավոր, մենք այլեւս չենք ուզում ողբալ, բայց ցավոք նման վիճակում ենք:

Հիմա պատերազմ է եղել, Փաշինյանն ասում է՝ դավաճաններ շատ կային, բայց մենք չենք տեսնում՝ ովքե՞ր են այդ դավաճանները:

Այդքան խոսում են դավաճաններից, եթե իսկապես եղել են նրանք, ապա թող հրապարակավ ժողովրդին հայտարարեն նրանց անուններն ու պատժեն՝ անկախ նրանից գեներալ է, թե շարքային զինվոր:

Ես զարմանում եմ նաեւ, թե ինչպես են բոլոր բնագավառներում նշաձողը քայքայում, առողջապահական, կրթական եւ այլ ոլորտներում մասնագիտական նշաձողը չի պահվում: Մեր բնագավառում անգամ ես կողմ եմ, որպեսզի ֆիլտրեն, եւ այն էքստրասենսներին, որոնք խաբեությամբ են զբաղված, հեռացնեն ոլորտից: Նույն կերպ եւ պաշտպանության ոլորտում, երբ ռազմի դաշտում գտնվող զինվորը զգում է, որ բանակն ուժեղ է, նա չի մտածում, որ պարտություն կկրի. սա է նաեւ մեր խնդիրը:

Հիմա 2024 թվականն է, այս տասնյակ տարիների ընթացքում մենք ներքին կարգով «հարստացանք», մինչդեռ ամեն մի շենք որքան ՀՕՊ կարող էր արժենալ: Փաշինյանն ինքն ասում է, որ Ադրբեջանը գրավեց Արցախն ու այն անվանեց է Արեւմտյան Ադրբեջան: Ալիեւն էլ նշում է՝ «Մենք չենք պատերազմել, որ Կիրանցը , Ոսկեպարը հանձնեն Ադրբեջանին, նրանք վախի զգացողության ազդեցության ներքո, պատերազմի եւ նոր զոհերի չգնալու համար տրամադրել են մեզ այդ տարածքները: Սա ստորացուցիչ ու ամոթալի է մեզ համար: Վտանգավոր վիճակ է Սյունիքի սահմաններին եւ ոչ միայն, մի՞թե չեն մտածում այս ղեկավարները, որ վաղը կարող են մտնել Հայաստանի սուվերեն տարածք: Ինչպե՞ս են ասում, թե ապահով է Հայաստանը:

Ես վստահ եմ սակայն՝ դավաճաններն իրենց պատիժը ստանալու են, եւ «Սամվելի «սուրը սպանելու է դավաճան հորը»:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ԹԱԹՈՅԱՆԻ ԵՎ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանն ու ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը համատեղ հայտարարություն են տարածել՝ անդրադառնալով հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանի կողմից արված հայտարարություններին, որոնք վերաբերում էին Արցախի քաղաքական վերնախավին եւ արցախցիներին:

Խստագույնս դատապարտելի է իշխանությունների կողմից արցախցիների նկատմամբ ուղղորդված ատելության խոսքը, ինչն արտահայտվեց նաեւ հունիսի 12-ին Ազգային ժողովում ՀՀ վարչապետի հայտարարություններում: Դրանից հետո սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում ավելի են սաստկացել արցախցիների նկատմամբ վիրավորանքներն ու ատելության խոսքը, նրանց ծաղրելու դրսեւորումները:

Էթնիկ զտումների զոհ դարձած Արցախի ժողովրդին ամեն ինչում մեղադրելու, ամեն հարցում թիրախավորելու այս արատավոր երեւույթը դառնում է հանրության մեջ արցախցիների նկատմամբ ատելության գեներացման եւ լայն տարածման պատճառ:

Բազմաթիվ են օրինակները, երբ այդ արշավը տարածում ու անգամ ուղղորդում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը, որը բռնի տեղահանված արցախցիների՝ հայաստանյան հասարակության ինտեգրմանն ու հանրային համերաշխությանը նպաստելու փոխարեն մասնակից է դառնում հայության մի հատվածի նկատմամբ տարվող ատելության գեներացմանը: Հանրային հեռուստաընկերության՝ որպես Կառավարության հիմնադրած ընկերության նման քաղաքականությունը ակնհայտ է դարձնում, որ սա իշխանությունների մտադրված քաղաքականությունն է:

Նշվածից բացի, բազմաթիվ վկայություններ փաստում են, որ հավաքների վայրերից բերման ենթարկված արցախցիների նկատմամբ ոստիկանության ներկայացուցիչները դրսեւորում են առանձնակի թիրախավորում, որն ուղեկցվում է արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններով, իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից Արցախի կորստի մեջ արցախցիներին մեղադրելու, Հայաստանում «տեղ չունենալու», «հյուր լինելու» եւ այլ վիրավորական արտահայտություններով:

Արցախի համայնքների ղեկավարների, մասնավորապես՝ Ստեփանակերտի, Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի համայնքապետերի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումները, նրանց ձերբակալումներն ուղեկցվում են ակնհայտ քաղաքական հովանավորչությամբ. դրանք նաեւ որեւէ իրավական հիմք չունեն: ՀՀ իշխանությունները չունեն Արցախի պետության նկատմամբ Արցախի համայնքային կամ պետական պաշտոնյաների պարտավորությունների, նրանց արարքների քննության որեւէ իրավասություն: Հայաստանի իշխանություններն իրենք են հրաժարվել Արցախի հետ իրավական ու անգամ բարոյական բոլոր առնչություններից:

Վերոնշյալ համայնքապետերի դեմ հետապնդումները սկսվեցին, եւ նրանք զրկվեցին ազատությունից՝ Հայաստանում իրենց քաղաքացիական, այդ թվում՝ հավաքների մասնակցության կամ այդ հավաքներին աջակցություն հայտնելու համար:

ՈՐՏԵ՞Ղ ԿԼԻՆԻ ՔՊ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնել են, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը շաբաթ օրը՝ հունիսի 22-ին, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ քաղաքական ժողով կանի:

Սա կուսակցության 4-րդ քաղաքական ժողովն է:

Կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը մեզ հայտնեց, որ ժողովը տեղի է ունենալու Հանքավանում:

Հիշեցնենք, որ կուսակցության քաղաքական առաջին ժողովը տեղի էր ունեցել 2022թ.-ի դեկտեմբերին՝ Ջերմուկ քաղաքում, երկրորդ ժողովը՝ 2023թ.-ի հունիսին՝ Դիլիջանում, իսկ ՔՊ քաղաքական երրորդ ժողովը տեղի էր ունեցել 2023թ.-ի դեկտեմբերին՝ Գյումրիում:

Նշենք, որ քաղաքական ժողովին մասնակցում են կուսակցության վարչությունը, պատգամավորները, մարզպետները, տարածքային կառույցների ղեկավարները եւ հրավիրյալները:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐ ԿՀՐԱՎԻՐԵՆ

ԱԺ հանձնաժողովներն արտահերթ նիստեր կհրավիրեն:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ հունիսի 17-ին՝ 18:30-ին, նիստ է պլանավորված, սակայն այն տեղի չունեցավ, քանզի բավարար որ քվորում չէր ապահովվել:

Օրակարգում հունիսի 21-ին՝ ժամը 11:00-ին, ԱԺ նիստերի դահլիճում «Հայաստանի՝ Եվրոպական միության անդամակցության հայտ ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկի շուրջ» թեմայով խորհրդարանական լսումներ հրավիրելու հարցն է:

Հաջորդ շաբաթ՝ հունիսի 25-ին, նիստ է անելու պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, նիստի օրակարգում «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին հարցն է:

ՍԱՄՍՈՆՅԱՆԸ ԼՔԵՑ «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը

«Լուսավոր Հայաստան» կուսակցության արդեն նախկին անդամ Անի Սամսոնյանը գրում է.

««Լուսավոր Հայաստան» կուսակցությունում ես իմ թիմի հետ անցել եմ բարդագույն քաղաքական ճանապարհ: Դուք եղել եք իմ կողքին, ես եղել եմ ձեր կողքին: Դուք բոլորդ իմ ընկերներն եք: Բայց ես պետք է ասեմ, որ իմ առաքելությունը կուսակցությունում ավարտված է: Մայիսի 29-ին դիմել եմ ԼՀԿ Կառավարման խորհրդին իմ լիազորությունները խորհրդում եւ անդամակցությունս կուսակցությունում դադարեցնելու համար: Լրացուցիչ մեկնաբանություններ չունեմ եւ չեն լինելու: Քաղաքական գործունեությունս շարունակելու եմ», - ասված է հրապարակման մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՄԱՐԴԻԿ ԿԱՌՉԱԾ ՉԵՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ». ՍՐԲԱԶԱՆ

«Ընդդիմադիր պատգամավորների մանդատները վայր դնելու քննարկումները շատ են եղել, հավատացե՛ք՝ մարդիկ կառչած չեն մանդատներից», - այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը՝ պատասխանելով հարցին՝ չե՞ք գտնում, որ ընդդիմությունը խորհրդարանում հարց չի կարող լուծել, իմպիչմենտի գործընթաց չի հաջողվում սկսել, ժամանակը չէ՞, որ մանդատները վայր դնեն, գուցե քաղաքական ճգնաժամ առաջանա:

«Վայր կդնեն այն ժամանակ, երբ արդյունավետ կլինի: Մանդատները խորքում որեւէ նշանակություն չունեն: Իրենք էլ են ասել, որ մանդատներ վայր դնելու հարցը օրակարգում միշտ էլ կա, կախում ունի, թե դրա արդյունավետությունը ո՞րն է լինելու, ի՞նչ ժամանակ, ինչպե՞ս: Անիմաստ կերպով մանդատ վայր դնելն ինչի՞ է ծառայելու, բայց օրակարգում կա դա, իրենք էլ են հասկանում, թե ինչ վիճակում են գտնվում», - ասաց Սրբազանը:

Անդրադառնալով ՔԿ կողմից կաշառք բաժանելու մեղադրանքներին՝ Բագրատ Սրբազանն ասաց, որ Արգիշտի Քյարամյանն ու իր կառույցը, դժբախտաբար, մաս են կազմում այս հանցագործ իշխանության ամբողջ գործունեությանը:

«Ընդհանրապես, իրավական համակարգն այսօր ծառայում է մեկ մարդու, եթե այդքան արդար են իրենք ոստիկանական բռնությունների հանդեպ ինչո՞ւ որեւէ «ծպտուն» չեն հանում, թե՞ ոստիկանության կանոնագրքում այդպես է գրված:

Գրվա՞ծ է, որ մարդկանց հայր, մայր, ընտանիք ինչ ասես կարող են հայհոյել, գրվա՞ծ է, որ երեխա կծեծեք, կանանց, երեխաների վրա ռումբ կնետեք՝ այն էլ արգելված.... Գրվա՞ծ են դրանք: Արգիշտի Քյարամյանը, եթե արդար մարդ է իր քննչական կոմիտեով, ուրեմն նաեւ դրա հետաքննությունը պետք է անի: Մեր երկրում քաղաքացիները որեւէ կողմից պաշտպանված չեն, եւ նրանք էլ ենթարկվում են մի մարդու քմահաճույքին՝ ինչ հրամայում են, դա էլ անում են, այդ պահին խելքը ինչ փչեց, այդպես էլ անում է իրավապահ համակարգը: Կարծում են՝ այս բռնաճնշումներով պետք է ճնշե՞ն... Չարաչար սխալվում են», - ասաց նա:

Սրբազանը նշեց, որ երեկ եւս այցելել է հիվանդանոցներ, պետք է կալանավորվածների ընտանիքներին այցելի եւ, ըստ նրա, ոչ ոք ընկրկելու խնդիր չունի: «Նույնիսկ ինձ են պարտադրում, ասում՝ հանկարծ որեւէ կերպով չնահանջես, որ մեզ հետ նման բան է պատահել, ո՛չ, մենք գիտակցաբար ենք գնացել», - պատմեց նա:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածով՝ կանխարգելման մանդատի շրջանակում Հանձնաժողովին է վերապահվել անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների կիրառման միասնականության ապահովումը եւ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երեւան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների, պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների պահպանմանը հետեւելը:

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2023 թվականին անհամատեղելիություն գտնելու նպատակով թիրախում են հայտնվել եւ մշտադիտարկվել են գործադիր իշխանության՝ կառավարության, կառավարությանը ենթակա մարմինների, վարչապետին ենթակա մարմինների ղեկավար կազմը՝ ընդհանուր պաշտոն զբաղեցնող 108 անձ:

Մշտադիտարկման արդյունքում անհամատեղելիության պահանջների առերեւույթ խախտում արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող երկու անձի շրջանում, որոնց նկատմամբ հարուցվել է համապատասխան վարույթ: Վարույթների համար հիմք է հանդիսացել վերջիններից՝ իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու սահմանափակ խախտումը, մասնավորապես՝ հանրային պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ նշված անձինք զբաղեցրել են համայնքի ավագանու անդամի պաշտոնը:

ԿԿՀ-ն 2023 թվականի հունիս ամսվա հաշվետվության մեջ առկա տվյալների համաձայն՝ կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու, այն է՝ հանրային պաշտոն եւ ավագանու անդամի պաշտոնի մեկտեղման դեպքերը եւ դրանց արձանագրումը առերեւույթ աճել է հաշվետու ժամանակահատվածում:

Ըստ հանձնաժողովի՝ սա կարելի է բացատրել մի կողմից՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում 2022 թվականին կատարված փոփոխությամբ, ըստ որի՝ անհամատեղելիության պահանջներից բացառություն սահմանվեց համայնքի ավագանու անդամների համար, մյուս կողմից՝ Հանրապետության տարբեր համայնքներում 2022 եւ 2023 թվականների ՏԻՄ ընտրությունների անցկացմամբ:

Հավելենք, որ Հանձնաժողովի կողմից մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացած 108 անձանցից 57-ը կամ 52.7-ը երբեւէ ներգրավված չեն եղել բիզնես գործընթացներում՝ չեն հանդիսացել առեւտրային կազմակերպության մասնակից կամ գործադիր մարմինների ներկայացուցիչ, իսկ 51-ը կամ 47.3%-ն ունեն կամ ունեցել են բաժնեմասնակցություն եւ ներկայացվածություն տարբեր առեւտրային կազմակերպություններում, հանդիսացել են անհատ ձեռնարկատեր, այդուհանդերձ պահպանել են «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջները՝ պաշտոնի ոտանձնումից հետո օրենքով սահմանված ժամկետներում բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելով եւ ներկայացվածությունը դադարեցնելով կամ համապատասխան դեպքերում՝ ԱՁ-ն հաշվառումից հանելով:

Ստացվում է, որ վարչապետի ղեկավարած եւ նրան առընթեր մարմինների աշխատակիցներին են գրանցել ԱՊ ընտրացուցակում, որպեսզի մի քանի ավելի ձայն հավաքի իշխող խմբակցությունը:

Սակայն հիշեցնենք, որ Երեւանի ավագանու ընտրությունների ընթացքում Տիգրան Ավինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 65 մանդատներից 24-ը՝ ձայների 33%-ով, կորցնելով նախկին ընտրությունների համեմատ բացարձակ մեծամասնությունը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԻԳՐԱՆԱՇԵՆԻ ՇՈՒՐՋ

«Մենք անկախությունը, ինքնիշխանությունը, պետականությունը համարում ենք բարձրագույն գործիք մեր երկրի՝ քաղաքացիների անվտանգությունը, բարեկեցությունը, ազատությունը, արդարությունը եւ երջանկությունն ապահովելու համար», - այս մասին հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ Կապանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստի ժամանակ:

«Հանկարծ չմտածեք, թե շատերը կան, որոնք մեր նման ուզում են այս պետությունը լինի», - հայտարարել է վարչապետը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԱԺ նախկին պատգամավոր, ԲՀԿ խորհրդի անդամ Արման Աբովյանի հետ՝ հասկանալու համար, ի՞նչ նկատի ուներ Նիկոլ Փաշինյանը այս հայտարարությամբ, որին ի պատասխան՝ ասաց, որ նախ պետք է պարզել, թե ինչ պետության մասին է խոսքը գնում:

Նրա խոսքով՝ իշխանության բոլոր խոսքերը պետք է ընկալել 180 ասիտճան հակառակ: Հաշվի առնելով իշխանության քաղաքականությունը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը գնում է դեպի տոտալ ապամոնտաժման, դա նվազագույնը կարելի է որակավորել, որպես մանիպուլյացիայի նոր դրսեւորում:

«Ըստ էության, ունենք մի իրավիճակ, երբ իշխանությունը կասկածի տակ է դնում Հայաստանի Հանրապետության սահմանները, ջարդուխուրդ անում անվտանգային ճարտարապետությունը, որը Հայաստանի շուրջ ձեւավորվել է տարիներ ի վեր, եւ դրա հետ մեկտեղ հնազանդ կերպով կատարում է Ադրբեջանի եւ Թուրքիայի պայմանները, հետո դա ներկայացնելով որպես ներքին որոշում՝ երկիրը տանում է դեպի ապամոնտաժման:

Եթե դուրս գանք հուզական դաշտից, պարզապես դիտարկենք իրավիճակը փաստերով, ապա կտեսնենք, որ Հայաստանի հյուսիսը՝ պաշտպանական գոտին փլուզեցին՝ անունը դնելով «դեմարկացիա եւ դելիմիտացիա»: Հիմա նույնը փորձելու են անել Հայաստանի հետ, արդեն պայմանական՝ կենտրոնական մասերի հետ: Ես մտավախություն ունեմ որ Տիգրանաշենի հերթն է գալիս»:

«Ժողովուրդ» օրաթերթը, Նիկոլ Փաշինյանի վերոնշյալ արտահայտության վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար, կապ հաստատեց նաեւ քաղաքագետ Թեւան Պողոսյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով, վերջինս մեջբերեց Մոնթե Մելքոնյանի խոսքերը. «Կորցնելով Արցախը՝ շրջելու եք հայոց պետականության վերջին էջը»:

Քաղաքագետի խոսքով՝ Ալիեւը շրջել է տվել, գրիչը դրել է գործող իշխանության ձեռքին եւ ասում է՝ «Սահմանադրություն պիտի փոխես, Սեւանի ջրի ավազանը համատեղ ենք օգտագործելու», հրամայում է քարտեզներ հրապարակել, թե ինչպես է պատկերացնում Սեւանը՝ մեջտեղից կիսած, ասել է՝ Սյունիքի միջանցքը տալու եք, կամավոր չտաք՝ ուժով եք տալու:

«Ես մի բան գիտեմ՝ ցանկացած բան կարելի է արտասանել, բայց գործողություններին պետք է նայել», - նշել է Թեւան Պողոսյանը:

Նշենք, որ Նիկոլ Փաշինյանը դեռ կիրակի օրը մեկնել է Սյունիք ու այցելել նաեւ այն համայնքները, որոնք գտնվում են թշնամու թիրախում, ավելին՝ նրա հսկողության տակ են կարեւոր ենթակառուցվածքները:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻԲՐԵՎ ԹԵ ԱՆՁԱՆՑ ՆՅՈՒԹԱՊԵՍ ՇԱՀԱԳՐԳՌԵԼ ԵՆ

«Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության հավաքներին անձանց նյութապես շահագրգռելու համար քրեական հետապնդում է հարուցվել երկու անձի նկատմամբ. մեկը ձերբակալվել է, մյուսին ձերբակալելու որոնում է կայացվել:

Քրեական վարույթի շրջանակում մեղադրանք է ներկայացվել 10 անձի, որոնցից 3-ը կալանավորվել է. ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունում շարունակվում է «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից անցկացվող բողոքի ակցիաներին մասնակցելու նպատակով այլ անձանց նյութապես շահագրգռելու վերաբերյալ հերթական քրեական վարույթի նախաքննությունը:

Ինչպես հունիսի 15-ին տեղեկացվել էր ՀՀ քննչական կոմիտեի կողմից, ՀՀ ոստիկանությունից ստացվել էին հաղորդումներ այն մասին, որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի 5 տարբեր հարթակներում տարածվել են տարբեր վերտառություններով, տարբեր անձանց միջեւ տեղի ունեցած խոսակցությունների 6 ձայնագրություններ, որոնցում լսվում են «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից անցկացվող բողոքի ակցիաներին մասնակցելու նպատակով այլ անձանց նյութապես շահագրգռելու վերաբերյալ խոսակցություններ: Ձայնագրությունների մեջ անձինք խոսում կամ քննարկում են այդ ակցիաներին կազմակերպված ձեւով մարդկանց մասնակցությունն ապահովելու, այդ նպատակով տրանսպորտային միջոցներ տրամադրելու, «մարդաքանակի» ապահովման համար գումարներ՝ «գլխարկներ» հատկացնելու, հավաքներին մարդկանց մասնակցության ապահովման համար կուսակցության կողմից ֆինանսական ռեսուրսներ կենտրոնացնելու, ՀՀ Ազգային ժողովի «վրա» գնալու, վերջին կռիվը տալու, ինչպես նաեւ հավաքներին մարդկանց մասնակցության համար հատկացված միջոցների սակավության, դրա շուրջ առաջացած տարաձայնությունների վերաբերյալ:

Նախաքննության շրջանակում պարզվել է, որ ձայնագրություններում լսվող խոսակցությունները տեղի են ունեցել 2024թ. մայիսի 25-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում՝ ինչպես հեռախոսազանգերի, այնպես էլ կայացած հանդիպումների, այդ թվում՝ նաեւ Վայքի ՀՅԴ գրասենյակում տեղի ունեցած ՀՅԴ ԳՄ անդամի մասնակցությամբ խորհրդակցության ընթացքում: Պարզվել են խոսակցությունները վարող, դրանց ընթացքում հնչող այլ անուններով անձանց ինքնությունները, ովքեր ՀՅԴ Եղեգնաձորի տարածքային կառույցների ներկայացուցիչներ են, կուսակցության անդամներ, ինչպես նաեւ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ:

Վարույթն իրականացնող մարմնի որոշումներով, վերոնշյալ առերեւույթ հանցավոր արարքների կատարման մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել էր 11 անձ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա նշված անձանցից 10-ին ներկայացվել են մեղադրանքներ՝ 3 անձի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով, 7-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-236-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունների քննության արդյունքում դատարանի որոշումներով մեղադրյալներից 3-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, 3-ի նկատմամբ՝ տնային կալանքը (մեկը՝ համակցված գրավով): Մյուս 4 մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Մեկ անձ արգելանքից ազատ է արձակվել:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե

ԼՈՒՐԵՐ

ՀՀ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2024 թվականի մայիս ամսվա ընթացքում «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը:

2024 թվականի մայիս ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով՝ 40 հարկ վճարողի մոտ արձանագրվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում:

Հսկողական միջոցառումների արդյունքում՝ հարկ վճարողներին ընդհանուր առմամբ առաջադրվել է 14.6 մլն դրամի չափով տուգանք:

ԱԾԵԼԻՈՎ ՎՆԱՍԵԼ Է ԻՐԵՆ

Հունիսի 13-ին երեկոյան 1-ին համալսարանական հիվանդանոցից ահազանգ է եղել, որ «Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ-ից «նախաբազկի կտրված վերք» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել 29-ամյա Ս.Ֆ-ն, որ դատապարտյալների հիվանդանոցում ժ. 00:30-ին ածելիով վնասել է իրեն:

Իսկ թե ինչու է նա գնացել այդ քայլին, հուսանք կպարզի քննությունը:

Վ. ՔԵՐՈԲՅԱՆԻ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի տնային կալանքի ժամկետը սպառվել է: Քերոբյանն այս մասին գրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում:

«Սպառվեց իմ քառամսյա տնային կալանքի ժամկետը: Այս ընթացքում ամեն օր ստացել եմ իմ բազմանդամ ընտանիքի անվերապահ սերն ու աջակցությունը, ընկերներս եւ գործընկերներս, բարեկամներս, բազմաթիվ բարի մարդիկ տվել են այնպիսի հզոր սատարում, որի մասին կարելի էր միայն երազել»,- գրել է Քերոբյանը:

Նա նշել է, որ կհասնի ինչպես իր, այնպես էլ մյուս բոլոր մեղադրյալների արդարացմանը:

«Դեռեւս նախորդ շաբաթ մենք բողոքներ ենք բերել դատախազության կայացրած այդ ապօրինի որոշումների դեմ: Իմ առաջնորդության ընթացքում ես միշտ քաջալերել եմ աշխատել ազնիվ, հայրենանվեր եւ համարձակ, եւ նման աշխատանքը պետք է արժանանա միայն երախտիքի»,- գրել է Քերոբյանը:

ՀՀ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանին մեղադրանք էր առաջադրվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հոդվածով՝ «Սիներջի» եւ «Հարմոնիա» ընկերությունների հետ կապված գործով: Քերոբյանը մեղադրանքը չի ընդունել: Նա փետրվարի 16-ից գտնվում էր տնային կալանքի տակ:

ԼՈՒՐԵՐ

ՏՈՒԺԱԾԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԵՆ ՈՐՊԵՍ ՎԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հունիսի 12-ին ոստիկանության կողմից նետած նռնակներից ձեռքի վիրավորում ստացած Եսային ներգրավել են վկա:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին խորհրդարանի մոտ վարչապետի հրաժարականը պահանջող «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցների եւ ոստիկանների միջեւ բախումներ եղան, ոստիկանությունը հատուկ միջոց՝ լուսաձայնային նռնակներ կիրառեց: Հարյուրից ավելի մարդ բերման ենթարկվեց, մոտ այդքան էլ տուժած կա:

Շարժումն առաջնորդող Բագրատ սրբազանը ոստիկանական գործողությունները որակել է «ահաբեկչություն» խաղաղ հավաքի մասնակիցների, ինչպես նաեւ ԱԺ հարեւանությամբ գտնվող այգում եղած քաղաքացիների նկատմամբ: Ըստ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ ոստիկանության հակազդեցությունը եղել է «իրավաչափ եւ պրոֆեսիոնալ»:

ԲԱԽՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ

Հունիսի 12-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ժամանակ ոստիկանությունը հատուկ միջոցներ կիրառեց Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում հավաքված ցուցարարների ողողությամբ: Դրանց թվում եղել է ռուսական արտադրության «Զարյա 3» ձեռքի լուսաձայնային նռնակ: Լուսաձայնային նռնակներից վիրավորում էր ստացել 101 քաղաքացիական անձ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ներքին գործերի նախարարությունն այդ դեպքից հետո աշխատակիցներին պարգեւավճարներ է փոխանցել՝ 200.000 դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցում ՆԳ նախարարի մամուլի քարտուղար Նարեկ Սարգսյանը հաստատեց տեղեկությունը:

«Ստանդարտ գործընթաց է եւ տարվա մեջ մի քանի անգամ ոստիկանության ծառայողները ստանում են պարգեւավճար եւ այո վերջերս նույնպես ոստիկանության բոլոր ծառայողները ստացել են պարգեւավճար»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 14-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 196 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ ՏՈՄՍԵՐ ԾԱԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախկինում գրել ենք, որ Տավուշի մարզպետարանը իր ենթակա մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին պարտադրել է աշակերտներին վաճառել էկզոտիկ կենդանիներ ցուցադրող «Մադագասկար» շրջիկ կրկեսի տոմսերը: Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Գոհար Թամամյանն իր հերթին դպրոցի դասղեկներին պարտադրել է դպրոցի 5-8-րդ դասարանների աշակերտներին պարտադրաբար վաճառել այդ կրկեսի տոմսերը՝ նրանց ասելով, որ մարզպետարանից հաշվետվություն են ուզում տոմսերի վաճառքի վիճակի մասին: Տնօրեն Գ. Թամամյանը դասղեկներին սպառնացել է նրանց աշխատավարձից գումար պահել, եթե նրանք տոմսերը «լավ չիրացնեն» աշակերտներին: Հաղարծին գյուղից սոցիալապես անապահով որոշ ծնողներ, որոնք օրվա հացի խնդիրը լուծելու խնդիր ունեն, իրենց երեխաներին պարտադրված տոմսերի առթիվ բողոքել են մեզ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հետեւյալ հարցադրումն ենք արել. «Դուք ինչ շահագրգռվածություն ունեք, որ մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին պարտադրել եք դպրոցներում անվճար տարածք տրամադրել, ամեն կերպ աջակցել «Մադագասկար» շրջիկ կրկեսի ներկայացումները, դպրոցների տնօրեններին պարտադրել եք աշակերտներին տոմսեր վաճառել եւ տոմսերի վաճառքի մասին ձեզ հաշվետվություն տալ: Դուք համերգային, թատերական այլ խմբերի ելույթներին աջակցելու համար նման կերպ պարտադրո՞ւմ եք հանրակրթական դպրոցների տնօրեններին»: Մարզպետարանից պատասխանել են. «Ցանկացած կրկեսային, համերգային, թատերական եւ տարատեսակ բնույթի ելույթները, որոնք կարող են հետաքրքիր եւ բովանդակալից դարձնել երեխայի օրը եւ որի համար մեզ դիմում են, մենք փորձում ենք աջակցել դրանց կայացմանը, քանի որ շատ երեխաներ (հատկապես գյուղական բնակավայրերում սովորող) չունեն հնարավորություն նմանատիպ միջոցառումների համար գնալու մայրաքաղաք, այն մատուցվում է նրանց ավելի մատչելի եւ հասանելի տարբերակով՝ իրենց իսկ դպրոցում, իսկ տոմսերի վաճառքը պայմանավորված է միայն երեխաների ցանկությամբ: Տավուշի մարզպետի աշխատակազմը երբեք որեւէ շահագրգռվածություն չի ունեցել եւ չունի նմանատիպ միջոցառումները պարտադրելու, ամեն ինչ արվում է ի բարօրություն երեխաների»: «Ի բարօրություն» երեխաների, դպրոցի տնօրենների ու դասղեկների միջոցով աշակերտներին, այդ թվում՝ օրվա հացը մի կերպ հայթայթող ընտանիքների երեխաներին, չպետք է հարկադրել գնանագան միջոցառումների տոմսեր գնել, այլ պետք է թողնել այդ երեխաների ու իրենց ծնողների ֆինանսական հնարավորությանը, նրանց ընտրությանը, թե որ գնալ կամ չգնալ, ինչ միջոցառումների ներկա գտնվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇՈՒՌՆՈՒԽ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ՝ 3.5 ՏԱՐԻ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ

44-օրյա պատերազմից հետո Շուռնուխից 13 տուն անցել էր Ադրբեջանի վերահսկողության տակ: Նոր տները պետք է բնակիչներին հանձնվեին դեռ 2021 թվականին, սակայն տները հանձնվեցին բնակիչներին հանձնվեցին 3,5 տարի անց՝ 2024 թվականի հունիսի 16-ին:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը տելեգրամյան էջում տեսանյութ է հրապարակել Շուռնուխի նորակառույց թաղամասից՝ կից գրելով. «Նորակառույց 13 տուն այսօր վիճակահանությամբ իբրեւ սեփականություն հանձնեցինք Շուռնուխի 13 ընտանիքների: Շուռնուխի նորակառույց թաղամասը պատրաստ է»:

Հիշեցնենք, որ նոր թաղամասի շահագործումը, հինգերորդ անգամ հետաձգվելուց հետո, միայն այս տարի կայացավ: 2023 թվականի դեկտեմբերին Քաղաքաշինության կոմիտեից հայտնել էին, որ նոր թաղամասում 13 տների եւ անասնագոմերի շինարարությունն ավարտվել է, մնացել է ավարտել բարեկարգումը, ապահովել ջրով եւ էլեկտրականությամբ:

Գյուղի բնակիչները, սակայն, պնդում էին հակառակը:

2023 թվականի սեպտեմբերին գործադիրը հայտարարեց, որ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցումն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ 228 մլն դրամ գումար: Հավելենք, որ Շուռնուխի նոր բնակելի թաղամասի կառուցման պայմանագրային ընդհանուր արժեքը շուրջ 1,2 մլրդ դրամ էր:

Բնակիչները մինչ շահագործումը պնդում էին, որ նոր թաղամասը, ինչպես ամբողջ գյուղը, ջրի կարիք ունի: Հիմնական աղբյուրների կորստից (որոնք Ադրբեջանի վերահսկողության տակ են մնացել) հետո կառուցված նոր ջրագիծը գյուղի պահանջները ընդհանրապես չի բավարարում: Ջուրը բավականացնում է ընդամենը մեկ-երկու տուն ապահովելու համար:

Ընդ որում, բնակիչները նախապես զգուշացրել էին իշխանություններին, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցի ժամանակ, որ աղբյուրը, որին միացվել է խողովակը, չափազանց սակավաջուր է, եւ խնդիրը չի լուծի:

Գյուղի մյուս խնդիրներից է նաեւ տրանսպորտը: Շաբաթը երկու անգամ Գորիսից գյուղ է գնում միկրոավտոբուս, բայց այն ծանրաբեռնված է լինում, քանի որ սպասարկում է միանգամից երեք գյուղ՝ Որոտան, Շուռնուխ եւ Բարձրավան:

Ստացվում է, որ իշխանությունները, իրենց հանդեպ ցասումը կանխելու համար, հարմար ժամանակ ավարտին հասցրին բնակարանների կառուցումը եւ եւս մեկ անգամ իրենց հեղինակությունը բարձրացնելու «մեծ» քայլ արեցին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Սույն թվականի հունիսի 15-ին տեղի ունեցավ «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի մրցանակաբաշխությունը:

Մրցույթը երիտասարդ գիտնականների համար (մինչեւ 45 տարեկան) հայտարարել էին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան եւ Ռուսաստանի հայերի միությունը: Մրցույթով սահմանվել էին 1-ին եւ 2-րդ կարգերի մրցանակներ 4 անվանակարգերում 2021-2023 թվականներին հրապարակված գիտական հոդվածների, հոդվածների շարքի, մենագրությունների կամ արտոնագրված աշխատանքների համար: Մրցանակային ընդհանուր ֆոնդը 8 միլիոն դրամ է:

«Ֆիզիկամաթեմատիկական եւ տեխնիկական գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակ է շնորհվել ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտից Արմեն Սարգսյանին: 2-րդ կարգի մրցանակ ստացել են Երեւանի պետական համալսարանից Տիգրան Աբրահամյանը եւ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտից Արմեն Վաղարշակյանը:

«Քիմիա եւ Երկրի մասին գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակը շնորհվել է ՀՀ ԳԱԱ օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնից Էլմիրա Հակոբյանին: 2-րդ կարգի մրցանակը ստացել է Երեւանի պետական համալսարանից Գոհար Շահինյանը:

«Կյանքի մասին գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակին արժանացել է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտից Արսեն Առաքելյանը: 2-րդ կարգի մրցանակը ստացել է Երեւանի պետական համալսարանից Կարեն Թռչունյանը:

«Հայագիտություն եւ հասարակական գիտություններ» անվանակարգում 1-ին կարգի մրցանակը ստացել է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտից Հայկ Հակոբյանը: 2-րդ կարգի մրցանակը շնորհվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտից Մերի Սարգսյանին:

Մրցանակակիրները պարգեւատրվել են դրամական պարգեւներով եւ արժանացել են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի եւ Ռուսաստանի հայերի միության պատվավոր դիպլոմների:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման եւ հասարակայնության հետ կապերի բաժին

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 44 պատահար. 72 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Մայիսի 26-ին տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով հեղեղումներից հետո Լոռու եւ Տավուշի մարզերում առաջացել էր արտակարգ իրավիճակ: Այնտեղ մի շարք համայնքներ հայտարարվել էին աղետի գոտիներ:

Վերը նշվածից տուժել էին տեղի շատ բնակիչներ, ինչից հետո, կառավարության որոշմամբ, հորդառատ անձրեւներից հետո առաջացած հեղեղումների հետեւանքները վերացնելու համար մարզպետարաններին 300 մլն դրամ պետք է հատկացվեր:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել ՀՀ Լոռու մարզի մարզպետ Արամ Ղազարյանին հետ՝ պարզելու՝ տրամադրվե՞լ են տուժողներին համապատասխան փոխհատուցումները:

Մեզ հետ զրույցում մարզպետ Ղազարյանն ասաց, որ համարյա պատրաստ է առաջին փուլի փոխհատուցման փաթեթը:

«Երեւի լսել եք, որ վարչապետի մոտ խորհրդակցություն էին, քննարկվում էր այդ փոխհատուցումների հետ կապված հարցերը, մեծ առումով արդեն իսկ պատրաստ է այդ փոխհատուցման առաջին փուլի փաթեթը: Ամենայն հավանականությամբ, օրերի ընթացքում որոշումը կլինի: Գլոբալ առումով գրեթե ամեն բան ավարտական փուլում է գտնվում, փոքր դետալներ են մնացել. հենց առաջին փուլի փոխհատուցումը մարդկանց տների վերանորոգման, առաջին պարագաների, տան պարագաների հետ կապված է լինելու, այդ փուլը շատ արագ կլինի, մնացածը քննարկման փուլում է», - մեզ հետ զրույցում ասաց Ղազարյանը:

Հիշեցնենք, որ աղետի գոտիներում եղել էր անհրաժեշտություն կամավորների, այդ իսկ պատճառով էլ շատերը կամավոր կերպով աշխատում էին աղետի գոտիներում:

Լոռու մարզպետից հետաքրքրվեցինք նաեւ՝արդյո՞ք կամավորները շարունակում են մնալ աղոտի գոտիներում, ինչին ի պատասխան՝ մարզպետն ասաց. «Կամավորների մեծ մասը հիմնականում հետ է վերադարձել՝ հաշվի առնելով, որ այն, ինչը առաջին անհրաժեշտության համար էր եւ արագ պետք է արվեր, կատարել է նաեւ նրանց շնորհիվ, բայց ներկա պահին էլ ունենք կամավորներ, որ ուրիշ աշխատանքներ են կատարում, ուղղակի մի քիչ ավելի փոքր ծավալի»:

Լոռու մարզպետարանից հայտնեցին նաեւ, որ աղետի գոտում երկաթուղու աշխատանքը վերականգնվել է,:

«Հեղեղումից կարճ ժամանակ անց՝ երեկ արդեն, շահագործվել է Ալավերդուց դեպի Այրում վնասված երկաթգիծը: Բեռնատար գնացքն անցել է նորոգված երկաթգծով», - ասված է հայտարարության մեջ:

Ոստիկանությանը եւս հանձնարարվել է խիստ հսկողություն սահմանել:

ԳՈՐԾԱՐՔ

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՀԱՅ ՁԵՌՆԵՐԵՑԻՆ

Ամերիկյան Caterpillar-ի ռուսական ակտիվները, ներառյալ հատուկ տեխնիկայի գործարանը Տոսնո քաղաքում («Կատերպիլար Տոսնո» ՍՊԸ, Լենինգրադի մարզ) եւ Մոսկվայի լիզինգային դուստր ընկերությունը («Կատերպիլար Ֆայնենսըլ» ՍՊԸ), հանձնվել են հայ ձեռներեց Դավիթ Ամարյանի Balchug Capital հիմնադրամի կողմից վերահսկվող ռուսական ընկերությանը

Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրի տեղեկության համաձայն՝ գործարքը կնքվել է հունիսի 14-ին, երբ Caterpillar ընկերության երկու ռուսական դուստր ընկերությունների վերահսկողությունը անցել է 2022թ. օգոստոսին գրանցված մոսկովյան «ՊՍԿ-Նոր լուծումներ» ՍՊԸ-ին: Այդ ընկերության հիմնական սեփականատերը հունիսի սկզբից «Բալչուգ Կապիտալ» ՓԲԸ-ն է (99 տոկոս), մնացած 1 տոկոսի սեփականատերը Արտյոմ Օրուսն է:

Ավելի վաղ՝ հունիսին, Օրուսը «ՊՍԿ-Նոր լուծումներ» ՍՊԸ գլխավոր տնօրենի պաշտոնում փոխարինել էր Կիրիլ Պոլիշկինին: Պոլիշկինը վերահսկում էր «ՊՍԿ-Նոր լուծումներ» ՍՊԸ 99 տոկոս բաժնեմասը «Ռոմուալդ» ՍՊԸ-ի միջոցով, Յան Վեյցմանի հետ միասին, որին «Ռոմուալդում» պատկանում էր մնացած 1 տոկոսը: Բաց աղբյուրների տվյալներով՝Պոլիշկինը նախկինում եղել է խոշոր հաճախորդների հետ աշխատանքի գծով դեպարտամենտի փոխտնօրեն Sberbank CIB-ում, իսկ Վեյցմանը գլխավորել է «Սբերի» հաճախորդների հետ աշխատանքի վարչությունը մետալուրգիայում եւ լեռնահանքային արդյունաբերությունում:

Ռուսաստանցի ներդրողին Caterpillar-ի ակտիվների հանձնումը 2023թ. վերջին իր կարգադրությամբ հավանության էր արժանացրել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

Caterpillar-ը 2022թ. գարնանը դադարեցրել էր Տոսնոյի գործարանի աշխատանքը պատժամիջոցների եւ լոգիստիկ խափանումների պատճառով Ուկրաինայում ռազմական գործողությունների ֆոնին:

Caterpillar-ի Տոսնոյի գործարանն աշխատում էր 2000 թվականից՝ արտադրելով ամենագնաց քարհանքային բեռնատարներ եւ հիդրավլիկ էքսկավատորներ Cat բրենդի, ինչպես նաեւ բաղադրիչներ մեքենաների եւ սարքավորումների համար, որոնք ընկերությունն արտահանում էր իր եվրոպական գործարաններ: «Կատերպիլար Տոսնո» ՍՊԸ-ն «Նեւամաշ»-ի իրավահաջորդն է, որը գրանցվել է 1994-ին, երբ ամերիկյան ընկերությունն սկսել էր արտադրել կոմպլեկտավորողներ հատուկ տեխնիկայի համար, «Կիրովի գործարանի» հետ համատեղ:

«ՍՊԱՐԿ-Ինտերֆաքս» վերլուծաբանական համակարգի տվյալներով՝ ձեռնարկության հասույթը 2021թ. կազմել է մոտ 5,9 մլրդ ռուբլի, 2023թ.՝ ընկել է 210 մլն ռուբլի: Ընկերությունը երեք տարի անընդմեջ զուտ վնաս է կրում՝ մոտ 890 մլն ռուբլի 2021թ. եւ մոտ 2 մլրդ՝ 2022 եւ 2023թթ. համապատասխանաբար:

«Կատերպիլար Ֆայնենշըլի» շրջանառությունը, որը մասնագիտանում է հատուկ տեխնիկայի լիզինգի ոլորտում, 2023թ. արդյունքներով ունեցել է վնաս՝ 800 մլն ռուբլի 2021թ. 10,3 մլրդ ռուբլու դիմաց: Ընկերության զուտ վնասը անցած տարի գերազանցել է 1 մլրդ ռուբլին, այն դեպքում, երբ 2021թ. արդյունքներով ընկերության շահույթը 1,5 մլրդ ռուբլուց բարձր էր:

«ԲԼՈԿՉԵՅՆ ԵՎ Web3 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»

ԱՌԱՋԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 60 ՈՒՍԱՆՈՂ ՈՒՆԻ

«Բլոկչեյն եւ Web3 տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ բակալավրի որակավորում տրամադրող աշխարհում առաջին եւ միակ կրթական ծրագիրը, որը վերջերս էր ներկայացվել հանրությանը, ունի 60 դիմորդ: Սեպտեմբերից մեկնարկող ուսումնական տարվանից նրանք հնարավորություն կստանան սովորելու այս բացառիկ կրթական ծրագրով:

Այս ծրագիրը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության եւ Web3 Հայաստան հիմնադրամի նախաձեռնությունն է:

Այս ծրագիրն աշխարհում առաջինն է, որն առաջարկում է բակալավրի կոչում «Բլոկչեյն եւ Web3 տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ՝ դառնալով նշանակալից նշաձող բարձր տեխնոլոգիաների ոլորտում երկրի կրթական առաջընթացի համար:

«Առանձնահատուկ կարեւորում եմ, որ ծրագրի նկատմամբ եղել է շատ մեծ հետաքրքրություն, սակայն ընտրվել է 60 դիմորդ, ովքեր իրենց կրթությունը կսկսեն ծրագրի շրջանակում: Սա շատ կարեւոր ծրագիր է, որը Հայաստանը դիրքավորելու է համաշխարհային քարտեզի վրա՝որպես թվային կրթության եւ նորարարության առաջատար: Եվ մենք շատ ուրախ ենք, որ կարողացանք իրականացնել այն եւ հավաքագրման փուլն այսքան բարեհաջող էր»,- նշում է Web3 Հայաստան հիմնադրամի համահիմնադիր Արտյոմ Հարությունյանը:

Բակալավրիատի ծրագիրը, որը մշակվել է համալսարանի եւ Web3 Armenia հիմնադրամի առաջատար փորձագետների հետ համատեղ, նպատակ ունի ուսանողներին զինելու խորը գիտելիքներով եւ գործնական հմտություններով բլոկչեյնի վերաբերյալ: Ուսումնական ծրագիրը ստեղծվել է այս նորարար տեխնոլոգիական ոլորտում հմուտ մասնագետների աճող պահանջարկը լուծելու համար՝ խթանելով ակադեմիական գերազանցության եւ իրական աշխարհի խնդիրների լուծման միջավայրը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԽՆԿԱՐԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ 125. ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Հունիսի 15-ին լրացավ մեծանուն քանդակագործ-աճանագործ, նկարիչ Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակը:

Այս առիթով Երեւանի քաղաքային պանթեոնում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը մասնակցել են Երվանդ Քոչարի հիշատակի խնկարկման արարողությանը եւ ծաղիկներ խոնարհել արվեստագետի շիրիմին:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանը, Երվանդ Քոչարի թանգարանի տնօրեն Կարինե Քոչարը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը, մեծանուն արվեստագետի ընտանիքի անդամները, նրա արվեստի երկրպագուները, արվեստագետներ:

«Երվանդ Քոչարի թողած ժառանգությունը համաշխարհային արվեստի մաս է, եւ դրանով նա հայաստանյան մշակույթը բարձրացնում է համաշխարհային մակարդակի: Կարծում եմ՝ թե՛ քանդակագործության, թե՛ նկարչության մեջ Քոչարի ստեղծած ժառանգությունը եւ նրա դրած ուղենիշները շատ արվեստագետների են ոգեշնչել ու ոգեշնչում, նրա գործերն աշխարհի տարբեր թանգարաններում են ցուցադրվում, ավելի մեծ շրջանակների ուսումնասիրության նյութ են դառնում: Մեզ համար հատկապես կարեւոր է նրա 125-ամյակի առթիվ եւս մեկ անգամ արժեւորվել արվեստագետին եւ նրա թողած ժառանգությունը», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի տեղեկացմամբ՝ Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառումները շարունակական կլինեն ողջ տարվա ընթացքում. ձեւավորվել է կառավարական հանձնաժողով՝ մեծանուն արվեստագետի հոբելյանը պատշաճ կազմակերպելու եւ նշելու համար: Անցկացվելու են տարբեր միջոցառումներ ինչպես Երեւանում եւ ՀՀ մարզերում, այնպես էլ արտերկրում, լինելու են ստեղծագործությունների եւ ֆիլմերի ցուցադրություններ, կրթական ծրագրեր ու առանձին միջոցառումներ:

«Այսօրինակ միջոցառումներով փորձելու ենք եւս մեկ անգամ հանրահռչակել, գնահատել եւ արժեւորել Երվանդ Քոչարի անունը, ստեղծագործությունները: Հատկանշական է նաեւ, որ այս տարի նշելու ենք մեր մայրաքաղաքի խորհրդանիշներից մեկի՝ «Սասունցի Դավիթ» արձանի տեղադրման 65-ամյակը, որի քանդակագործը Երվանդ Քոչարն է: Այսօրինակ միջոցառումներով եւս մեկ անգամ կբացահայտենք Երեւանի այն բոլոր կարեւոր վայրերը, որոնք կապված են Քոչարի ստեղծագործական գործունեության հետ: Նմանօրինակ նախաձեռնությունները հետաքրքրություն կառաջացնեն նաեւ զբոսաշրջիկների շրջանում՝ այլ տեսանկյունից բացահայտելու Երեւանը», - նշել է Ժաննա Անդրեասյանը:

Պանթեոնի միջոցառումից հետո Երվանդ Քոչարի թանգարանում տեղի է ունեցել արվեստագետին նվիրված հուշ-ցերեկույթ: Ներկաներն անդրադարձել են Երվանդ Քոչարի կյանքին, ստեղծագործություններին, գործունեությանը:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ 125

ՀՈԲԵԼՅԱՆԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գրականության եւ արվեստի թանգարանի «Ակսել Բակունցի տուն-թանգարան» մասնաճյուղում «Բակունց 125» հոբելյանական միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, Ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը, գրականության եւ արվեստի ոլորտի ներկայացուցիչներ:



Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանն էլ անդրադառնալով Բակունցի մեծ հոբելյանին ասել է. «Այստեղ՝ Գորիսում, ծիրանափողը դեռ հնչում է, Միրոն պատմություններ է պատմում, իսկ ալպիական մանուշակը բուրում է: Հենց այստեղ բոլորս մտովի ինքներս մեզ խոստանանք ի հիշատակ Բակունցի սիրել, պահպանել եւ փայփայել մեր հողը»: Հոբելյանական օրվա շրջանակում թատերական ներկայացմամբ ելույթ են ունեցել Գորիսի Վ? Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները, այնուհետեւ համերգային ծրագրով ներկայացան ԵՊԿ պրոֆեսոր, դաշնակահար Մարգարիտ Սարգսյանը, երգչուհի Լուիզա Երեմյանը, ջութակահար Գարեգին Գրիգորյանը, Գորիսի երաժշտական դպրոցի սաները: Ա. Բակունցի տուն-թանգարանի այգում տեղի ունեցավ հանդիպում գրող-հրապարակախոս, Նյու Յորքի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ Յակոբ Այնթապլեանի հետ: Հոբելյանական օրվա կարեւոր իրադարձություններից էին նաեւ Մարիամ Ասլամազյանի «Բակունցը մոր հետ» դիմանկարի՝ հավելվածով անիմացիայի եւ «Սյունյաց երկիր» թերթի՝ Ակսել Բակունցին նվիրված հատուկ համարի շնորհանդեսները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ Է

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի անդամ Գաբրիել Սարգսյանը հաջող է մեկնարկել «Teplice Open 2024» միջազգային մրցաշարում:

Երկու տուրից հետո Գաբրիել Սարգսյանն ու եւս 40 շախմատիստ ունեն 2-ական միավոր: Մեկնարկում Գաբրիել Սարգսյանը գերազանցել էր Լեհաստանից Պիոտր Կոնդիսին, իսկ երկրորդ տուրում՝ Թուրքիայից Ատիլա Կուրուին:

ՖԻԴԵ-ի հովանու ներքո անցկացվող «Teplice Open 2024» միջազգային մրցաշարին մասնակցում է մոտ 300 շախմատիստ: Մրցաշարի ամենաբարձր վարկանիշ ունեցող մասնակիցը Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի անդամ գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանն է:

ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ Մ–20 ՓՈԽՉԵՄՊԻՈՆ

Հայաստանի ներկայացուցիչ Մարիամ Մկրտչյանը նվաճեց Հնդկաստանում անցկացված շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկան աղջիկների առաջնության փոխչեմպիոնի կոչումը:

Վերջին տուրում Մարիամ Մկրտչյանը պարտության մատնեց հնդիկ Ռավի Ռակշիտային եւ վաստակեց 9,5 միավոր: Չեմպիոնի կոչումը նվաճեց հնդիկ Դիվյա Դեշմուխը, որը 11 հնարավորից վաստակեց 10 միավոր: Մարիամ Մկրտչյանը ոչ մի պարտություն չկրեց այս առաջնությունում՝ 8 հաղթանակ, 3 ոչ-ոքի:

ԽԱՉԱՆՈՎԸ 22–ՐԴՆ Է ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան (ATP) հրապարակել է մենախաղի թարմացված վարկանիշային աղյուսակը:

Կարեն Խաչանովը 22-րդն է վարկանիշում: Առաջատարը շարունակում է մնալ իտալացի Յանիկ Սիները: Երկրորդ տեղում իսպանացի Կարլոս Ալկարասն է, երրորդում՝ սերբ Նովակ Ջոկովիչը:

ATP վարկանիշը հունիսի 17-ի դրությամբ.

1. Յանիկ Սիներ (Իտալիա) - 9480 միավոր.

2. (2). Կարլոս Ալկարաս (Իսպանիա) - 8580.

3. (3). Նովակ Ջոկովիչ (Սերբիա) - 8360.

4. (4). Ալեքսանդր Զվերեւ (Գերմանիա) - 6885.

5. (5). Դանիլ Մեդվեդեւ (Ռուսաստան) - 6485.

6. (6). Անդրեյ Ռուբլեւ (Ռուսաստան) - 4710.

7. (9). Ալեքս դե Մինաուր (Ավստրալիա) - 4085.

8. (7). Կասպեր Ռուդ (Նորվեգիա) - 4025.

9. (8). Հուբերտ Հուրկաչ (Լեհաստան) - 3950.

10 (10). Գրիգոր Դիմիտրով (Բուլղարիա) - 3775.

22. (22). Կարեն Խաչանով (Ռուսաստան) - 1780

● Հունիսի 20-ին՝ժամը 19:00-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկանները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. ՀՀ sարածfում կառուցված բազմաբնակարան բնակելի cենfում անմիջապես կառուցապաsողից հիփոթեfային վարկով բնակարան ձեռf բերած վարկառուն միաժամանակ վարձու աcխաsող եւ անհաs ձեռնարկաsեr է. sվյալ դեպfում ինչպե՞ս է կաsարվում եկամsային հարկի գումարների վերադարձը:

Գարիկ Մուրադյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության՝ 19.02.2015թ. N 205-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ եթե վարկառուն միաժամանակ վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր է, ապա հաշվետու տարվա համար ներկայացված տարեկան հաշվարկի հիման վրա հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարների վերադարձը կատարվում է տվյալ տարվա ընթացքում հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների հանրագումարի եւ տվյալ տարվա եռամսյակների ամիսների համար վճարված եւ վերադարձված (վերադարձման ենթակա) եկամտային հարկի հանրագումարի դրական տարբերության չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն ՀՀ կառավարության՝19.02.2015թ. N 205-Ն որոշման 4-րդ կետի՝ վարձու աշխատողին հաշվետու եռամսյակի որեւէ ամսում հաշվարկված աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բնակչության սոցիալական պաcsպանության cուrջօrյա խնամfի ընդհանուր sիպի հասsաsություն ընդունվելու համար ո՞ւմ պեsf է դիմի fաղաfացին:

Լուսինե Օհանյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին (այսուհետ՝ տարածքային մարմին), որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը, տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա, համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը Հենրիկ Մխիթարյանի հետ լուսանկար է հրապարակել՝ վերնագրելով այն «Լավագույնի հետ»: Նկարի ձախ հատվածում Սպերցյանը պատանի տարիքում է Մխիթարյանի հետ, իսկ աջ հատվածում արդեն իբրեւ կայացած ֆուտբոլիստ: Հենրիկ Մխիթարյանը կիսվել է նկարով՝նշելով՝«Ծագող աստղի հետ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+8 +10 / +22 +26
Կոտայքի լեռներ	+8 +12 / +21 +24
Կոտայքի նախալեռներ	+15 +17 / +28 +30
Գեղարքունիք	+10 +13 / +21 +24
Լոռի	+9 +13 / +24 +27
Տավուշ	+15 +17 / +28 +31
Արագածոտնի լեռներ	+9 +13 / +21 +24
Արագածոտնի նախալեռներ	+15 +18 / +28 +31
Արարատ	+16 +18 / +31 +33
Արմավիր	+16 +18 / +31 +33
Վայոց ձորի լեռներ	+8 +11 / +22 +24
Վայոց ձորի նախալեռներ	+16 +18 / +31 +33
Սյունիքի հովիտներ	+18 +22 / +29 +32
Սյունիքի նախալեռներ	+13 +15 / +25 +28
ԼՂՀ	+13 +14 / +25 +26
Երեւան	+19 +21 / +23 +25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*